ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Ալիկ Ալոյանը, Սիրակ Հովակիմյանը, Արամ Հովսեփյանը, Անահիտ Ղազարյանը, Գարեգին Մարգարյանը, Ժորա Մարտիրոսյանը, Արամ Մկրտչյանը

Համայնքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Արփենիկ Բաղդասարյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Տիգրան Պողոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադեվոսյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 14 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով, ***համայնքի ավագանին որոշում է***.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 28-ի՝ հերթական թիվ 14 նիստի հետևյալ օրակարգը.

1. Համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման վերաբերյալ.

2. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալությամբ տրամադ
ելու մասին.

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 186-
Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու հեր
թական նիստի գումարման օրը սահմանելու մասին.

5. Հայաստանի Հանրապետության 2024
թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով Գառնի հ
ամայնքի ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերը հաստատելու մասի
ն:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 131-Ա/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-
րդ կետի ***ավագանին որոշում է՝***

1. Գառնի համայնքի սեփականություն համարվող հողերը օտարել հրապարակային սակ
արկումների միջոցով սահմանելով մեկնարկային գին համայնքի կարիքների համար
համաձայն հավելվածի:
2. Աճուրդը տեղի կունենա 2023թվականին

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 132-Ա/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով ***համայնքի ավագանին որոշում է՝***

Գառնի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից (գյուղատնտեսության վարելահող, արոտավայր) վարձակալության իրավունքով տրամադրել:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 133-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 186-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավականակտերի մասին» 33-րդ հոդվածի առաջին մասով, 34-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «ՀայաստանիՀանրապետությանբյուջետայինհամակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, ***համայնքի ավագանին որոշում է***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀայաստանիՀանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2023 թվականիբյուջենհաստատելու մասին» N 186-Ն որոշման (այսուհետ՝որոշում) մեջ կատարելփոփոխությունհամաձայն հավելվածի.

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 134-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամսահմանել 2023 թվականի դեկտեմբերի 26-ը՝ ժամը 17:30:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 135-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով հաստատել ստորև նշված ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերը՝

1. «Գառնի համայնքի ճանապարհների ասֆալտապատում»:
2. «Գառնի համայնքի ճանապարհային լուսավորության անցկացման աշխատանքներ».
3. «Գառնի համայնքի ջրագծերի կառուցում».
4. «Գառնի համայնքում գազաֆիկացման աշխատանքների իրականացում».

2. Սահմանել, որ վերոնշյալ ծրագրերի իրականացման և համայնքային ներդրում կատարելու համար համայնքի 2024 թվականի բյուջեով ֆինանսական միջոցներ նախատեսվում են հետևյալ չափերով՝

1. «Գառնի համայնքի ճանապարհների ասֆալտապատում» ծրագրի համար՝ նախատեսված ծախսերի 65 տոկոսը
2. «Գառնի համայնքի ճանապարհային լուսավորության անցկացման աշխատանքներ» ծրագրի համար՝ նախատեսված ծախսերի 55 տոկոսը
3. «Գառնի համայնքի ջրագծերի կառուցում» ծրագրի համար՝ նախատեսված ծախսերի 35 տոկոսը.
4. «Գառնի համայնքում գազաֆիկացման աշխատանքների իրականացում» ծրագրի համար՝ նախատեսված ծախսերի 65 տոկոսը

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 136-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՏՅՈՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՍԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐՍԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ